Կարգապահական գործ թիվ ԿԳ-25092

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՓԱՍՏԱԲԱՆ ԷԼԱԴԱ ԷԴՈՒԱՐԴԻ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետ նաև՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի զեկուցող անդամ՝ Կարինե Բաղդասարյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Վերոնիկա Ալեքսանյանի, Վահե Աստվածատրյանի, Միքայել Դանիելյանի, Գուրգեն Թորոսյանի, Կարեն Խալաթյանի և Արաքս Վարդանյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Մերի Տերտերյանի,

մասնակցությամբ՝ փաստաբան Էլադա Ղահրամանյանի, դիմող Տիգրան Սիմոնյանի,

քննության առնելով փաստաբան Էլադա Էդուարդի Ղահրամանյանի (արտոնագիր՝ ԱՀ թիվ 67, հավատարմագիր՝ թիվ 47), **(այսուհետ նաև՝ Փաստաբան կամ Պատասխանող)**, կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Քաղաքացի Տիգրան Սիմոնյանը **(այսուհետ նաև՝ Դիմող)**, դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ **(այսուհետ նաև՝ Պալատ)**, հայտնել է, որ իր երեխայի հետ տեսակցության հարցը կարգավորելու նպատակով դիմել է «Կոնտրա լեգեմ» ընկերությանը, ինչի կապակցությամբ Դիմողի շահերի պաշտպանությունը ստանձնել են փաստաբաններ Ալեքսանդր Կոչուբաևը և Էլադա Ղահրամանյանը:

Ըստ դիմումի և կից ներկայացված նյութերի՝

• թիվ ԵԴ2/10721/02/24 քաղաքացիական գործով ներկայացված հայցադիմումում փաստաբանները թույլ են տվել խախտումներ, որոնց արդյունքում Դատարանն այն վերադարձրել է, իսկ հետագայում կրկին ներկայացվելուց հետո, գործի քննության ընթացքում չեն ներկայացել երկու հաջորդական՝ 17.03.2025 և 14.04.2025 դատական նիստերին, ինչի արդյունքում գործը թողնվել է առանց քննության,

• թիվ ԵԴ2/4531/02/25 քաղաքացիական գործով՝ ներկայացված հայցադիմումում փաստաբանները թույլ են տվել խախտումներ, որոնց արդյունքում Դատարանը այն վերադարձրել է 12.05.2025 թվականի որոշմամբ, ինչից հետո այն կրկին չի ներկայացվել:

Թիվ ԿԳ-25092-2-Ա
18.02.2026թ.

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով Դիմողին առաջարկվել է՝ «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետ նաև՝ Օրենք)** 39.5 հոդվածի 5-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ, սակայն Դիմողը որևէ ապացույց կամ դիրքորոշում չի ներկայացրել:

2. Պատասխանողի համառոտ բացատրությունները.

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը փաստաբան Էլադա Ղահրամանյանին առաջարկվել է ներկայացնել բացատրություն Դիմողի դիմումի վերաբերյալ:

07.11.2025 թվականի գրությամբ Փաստաբանը հայտնել է, որ Պալատից տեղեկացել է մուտքագրված բողոքի մասին, սակայն չի ստացել այն, քանի որ հասանելիություն չունի իր էլեկտրոնային փոստին, իսկ Պալատին տրված հասցեն փոփոխվել է, ինչով պայմանավորված խնդրել է ծանուցումներն ուղարկել այլ հասցեով:

Միաժամանակ, Փաստաբանը խնդրել է լրացուցիչ ժամանակ դիրքորոշում ներկայացնելու համար, ինչպես նաև պատրաստակամություն է հայտնել ներկայանալ և տեղում ծանոթանալ դիմումին և կից նյութերին, սակայն բացատրություն չի ներկայացրել:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ Փաստաբանին՝ առաջարկվել է Օրենքի 39.5 հոդվածի 5-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ, սակայն Փաստաբանը կրկին որևէ ապացույց կամ դիրքորոշում չի ներկայացրել:

3. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.

Պալատի նախագահի 17.11.2025 թվականի թիվ 331-Ա/ԿԳ-25092 որոշմամբ փաստաբան Էլադա Ղահրամանյանի նկատմամբ **Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի**, ինչպես նաև Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ նաև՝ Կանոնագիրք)** 3.5.5 և ենթակետերի խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

21.11.2025թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից Հայկ Ծատուրյանին (**այսուհետ նաև՝ Աշխատակից**):

3.1. Վկաների ցուցմունքները.

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 21.01.2026թ. կազմել է եզրակացություն:

Կարգապահական գործը Պալատի Հանձնաժողովին է հանձնվել 21.06.2026թ.:

Եզրակացությամբ հաստատված են համարվել սույն որոշման 5-րդ գլխի 1-6-րդ կետերում նշված փաստերը:

Հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 18.02.2026թ. ժամը 19:30-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. Փաստաբան Էլադա Ղահրամանյանը ստանձնել է Տիգրան Սիմոնյանի շահերի պաշտպանությունը: *Սույն փաստը հաստատվում է կողմերի բացատրությամբ, նամակագրությամբ, ինչպես նաև Տիգրան Սիմոնյանի և Էլադա Ղահրամանյանի միջև կնքված փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագրի պատճենով:*

2. Տիգրան Սիմոնյանի և Էլադա Ղահրամանյանի միջև կնքված փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագրերի 1-ին կետի համաձայն՝ Կատարողը պարտավորվում է իրականացնել Պատվիրատուի շահերի ներկայացուցչությունը թիվ ԵԴ2/10721/02/24 քաղաքացիական, քրեական գործով ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի, ՀՀ վերաքննիչ և վճռաբեկ դատարաններում: *Սույն փաստը հաստատվում է Տիգրան Սիմոնյանի և Էլադա Ղահրամանյանի միջև կնքված փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագրերի պատճենով:*

3. Դիմողը վճարել է փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագրով նախատեսված ծառայության արժեքը: *Սույն փաստը հաստատվում է կողմերի բացատրությամբ, վճարման անդորրագրերի պատճեններով:*

4. Տիգրան Սիմոնյանի և Էլադա Ղահրամանյանի միջև կնքված փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիրը լուծված կամ պայմանագրի առարկան փոփոխված լինելու վերաբերյալ կարգապահական գործում առկա չէ որևէ ապացույց:

5. Տրված հանձնարարության համապատասխան Փաստաբանը կազմել է հայցադիմում՝ երեխայի հետ տեսակցության կարգ սահմանելու մասին, և այն 11.12.2025թ. ներկայացրել է դատարան, որը ստացել է թիվ ԵԴ2/10721/02/24 համարը: Դատարանը վերադարձրել է 11.12.2025թ. ներկայացված հայցադիմումն արձանագրելով, որ հայցադիմումը ստորագրված չէ, ինչպես նաև հայցադիմումի վերջնամասում նշված հայցվորի անվան և ազգանվան տվյալներում նշված է «Տ.Առաքելյան»: 07.01.2025թ. հայցադիմումը կրկին է ներկայացվել, որը Դատարանի 10.01.2025թ. որոշմամբ ընդունվել է վարույթ: Նույն օրը դատարանը բավարարել է հայցի ապահովման վերաբերյալ միջնորդությունը մասնակի: Դատարանը սահմանել է Տիգրան Արտյիկի Սիմոնյանի և

Արայիկ Տիգրանի Սիմոնյանի հետևյալ շփման կարգը՝ յուրաքանչյուր շաբաթվա ուրբաթ օր ժամը 18:00-ից մինչև 20:00-ն, շաբաթ և կիրակի օրերին՝ ժամը 11:00-ից մինչև 18:00-ն՝ երեխայի մոր ներկայությամբ:

6. 28.04.2025 թվականին Փաստաբանի կողմից կրկին ներկայացվել է հայցադիմում՝ երեխայի հետ տեսակցության կարգ սահմանելու մասին, որը ստացել է թիվ ԵԴ2/4531/02/25 համարը: Նշված գործով հայցադիմումը վերադարձվել է Դատարանի 12.05.2025 թվականի որոշմամբ այն պատճառով, որ

«2.1 ... հայցադիմումը ներկայացվել է պատասխանողի բնակության վայրի (հասցեն՝ ք. Երևան, Աջափնյակ, Բաշինջաղյան փող., 1-ին նրբ., տուն 27) դատարան, այնինչ, ... հայցը ներկայացվում է պատասխանողի հաշվառման (գտնվելու) վայրի, իսկ քաղաքացու՝ հաշվառման վայր չունենալու դեպքում՝ բնակության վերջին հայտնի վայրի առաջին ատյանի դատարան: Միևնույն ժամանակ, Դատարանը ցանկանում է նշել, որ հայցադիմումին կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից ևս Դատարանին պարզ չի դառնում, թե նշված հասցեն հանդիսանում է Պատասխանողի միայն բնակության վայրի հասցեն, թե՞ նաև հաշվառման վայրի հասցեն է, ինչպես նաև հայցադիմումում առկա չէ որևէ նշում այն մասին, որ վերջինիս հաշվառման վայրի հասցե ունի՞ թե ոչ:

2.2 ... ներկայացված հայցադիմումով որպես հայցվորի հաշվառման վայրի հասցե նշվել է ք. Երևան, Բագրատունյաց փող., շենք 31, բն. 33 հասցեն, այնինչ հայցադիմումին կից ներկայացված հայցվորի անձը հաստատող փաստաթղթի համաձայն՝ հայցվորի հաշվառման վայրի հասցեն է հանդիսանում ք. Երևան, Արարատյան 1-ին զնգվ., շենք 8, բն. 26 հասցեն, այսինքն հայցվորի կողմից չի պահպանվել նաև 121-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով սահմանված պահանջը:

7. ... սույն գործով Հայցվորի կողմից ներկայացվել է հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդություն, սակայն հայցադիմումին կից չի ներկայացվել հայցադիմումի օրինակը և դրան կից փաստաթղթերի պատճենները, դրանք՝ հետագայում կողմին ուղարկելու համար:»: *Սույն փաստը հաստատվում է Դիմողի և Փաստաբանի բացատրություններով, նամակագրություններով, դատական ակտի պատճենով, ինչպես նաև «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկատվությամբ:*

8. Հայցադիմումում որպես ծանուցման հասցե՝ Փաստաբանի կողմից նշվել է քաղաք Երևան, Սայաթ Նովա 40,80/20, իսկ որպես կապի միջոց՝ 097-20-87-86 հեռախոսահամարը, որը պատկանում է Փաստաբանին, իսկ ծանուցման հասցեն Փաստաբանի գործունեության հասցեն է: *Նշված փաստերը հաստատվում են Փաստաբանի բացատրությամբ, ինչպես նաև ՀՀ փաստաբանների պալատի կայքում հրապարակված տվյալներով:*

9. Թիվ ԵԴ2/10721/02/24 քաղաքացիական գործով Դատարանի կողմից բոլոր դատավարական փաստաթղթերն ուղարկվել են քաղաք Երևան, Սայաթ Նովա 40,80/20 հասցեով, որոնք ստացվել են «Կոնտրա Լեգեմ» փաստաբանական ընկերությունը: *Սույն փաստերը հաստատվում են ծանուցագրերի և այլ դատավարական փաստաթղթերի պատճեններով, ինչպես նաև Հայփոստի կողմից տրված գրության պատճենով:*

10. Փաստաբանը ինչպես կարգապահական նիստի ժամանակ, այնպես էլ

Դիմողին հայտնել է, որ չի ստացել դատական նիստերի ծանուցումներ, այնուամենայնիվ Դիմողի և Փաստաբանի նամակագրությունից հետևում է, որ վերջինս առնվազն ստացել է 17.03.2025թ. նշանակված դատական նիստի ծանուցումը: *Սույն փաստը հաստատվում է Դիմողի և Փաստաբանի նամակագրություններով:*

11. Թիվ ԵԴ2/10721/02/24 քաղաքացիական գործով Դատարանի 14.04.2025թ. որոշմամբ թողնվել է առանց քննության այն պատճառով, որ Դիմողը կամ Փաստաբանը չեն ներկայացել երկու հաջորդական՝ 17.03.2025 և 14.04.2025 դատական նիստերին: *Սույն փաստը հաստատվում է Դիմողի և Փաստաբանի բացատրություններով, նամակագրություններով, դատական ակտի պատճենով, ինչպես նաև «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկատվությամբ:*

12. Փաստաբանի կողմից նշվել է, որ 28.04.2025թ. իր կողմից հայց է ներկայացվել դատարան՝ բնակության վայրը Դիմողի մոտ որոշելու պահանջով, այսինքն՝ թիվ ԵԴ2/10721/02/24 քաղաքացիական գործով Դատարանի 14.04.2025թ. որոշումից հետո: *Սույն փաստը հաստատվում է Փաստաբանի բացատրությամբ:*

13. Թիվ ԵԴ2/10721/02/24 քաղաքացիական գործով Դատարանի 14.04.2025թ. որոշումը չի բողոքարկվել և մտել է օրինական ուժի մեջ, հետևաբար վերացվել է նաև Դատարանի 10.01.2025թ. որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը: *Սույն փաստը հաստատվում է «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկատվությամբ:*

14. Կարգապահական նիստի ընթացքում Փաստաբանը հայտնել է, որ հանձնարարությունը փոփոխվել է գրավոր եղանակով: *Սույն փաստը հաստատվում է կարգապահական նիստի ձայնագրությամբ:*

15. Փաստաբանը կարգապահական վարույթի ընթացքում նշել է, որ բացակայել է անհրաժեշտությունը մասնակցելու թիվ ԵԴ2/10721/02/24 քաղաքացիական գործով նշանակված նիստերին, քանի որ փոխվել է հանձնարարությունը *(տեսակցության կարգ սահմանելը փոխարինվել է բնակության վայրը Դիմողի մոտ որոշելու պահանջով):* Միևնույն ժամանակ Փաստաբանը կարգապահական նիստի ընթացքում հայտնել է, որ չի հիշում, թե երբ է փոխվել հանձնարարությունը: *Սույն փաստը հաստատվում է կարգապահական նիստի ձայնագրությամբ:*

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Էլադա Էդուարդի Ղահրամանյանն Արցախի Հանրապետության փաստաբան է հանդիսանում 05.12.2013թ., իսկ ՀՀ փաստաբանների պալատում հավատարմագրվել է՝ 29.10.2015-29.10.2016թթ, 24.03.2020-24.03.2021թթ, 13.12.2022-13.12.2023թթ, 25.01.2024-25.01.2025թթ, 26.01.2025-26.01.2026թթ, 27.01.2026-27.01.2027թթ, և սույն տեղեկանքը տրամադրելու օրվա դրությամբ հավատարմագրված ժամանակահատվածում փաստաբանը չունի կարգապահական տույժ:

7. <u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Էլադա Էդուարդի Ղահրամանյանը ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 3.5.5 ենթակետերի պահանջների խախտման համար:

Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է պահպանել նույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար, ... :*

Օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթն իրականացվում է օրինականության, օրենքի և փաստաբանների պալատի առջև հավասարության, մրցակցության, կատարված կարգապահական խախտման համար նշանակվող կարգապահական տույժի համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝ սույն օրենքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ, ինչպես նաև փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանը ենթակա չէ կարգապահական պատասխանատվության մեղքի բացակայության դեպքում:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *կարգապահական խախտման համար փաստաբանը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ սույն օրենքով սահմանված կարգով՝ Կարգապահական հանձնաժողովի՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին ուժի մեջ մտած որոշմամբ: Փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են փաստաբանի օգտին:*

Օրենքի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *Փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարճում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ՝ առկա չէ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք:*

Ներկայացված նորմերի համադրության և վերլուծության արդյունքում կարելի է փաստել, որ Օրենքով սահմանված են որոշակի վավերապայմաններ, որոնց առկայության դեպքում միայն կարգապահական վարույթի շրջանակներում կարող է քննարկվել փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը: Նշված վավերապայմաններն իրենց հերթին ենթադրում են փաստաբանի վարքագծում Օրենքի և Կանոնագրքի պահանջների խախտման առկայությունը, որը կատարվել է դիտավորությամբ

կամ կոպիտ անփութությամբ:

Ընդ որում, նման վավերապայմանների ամրագրումն ինքնանպատակ չէ և ըստ էության նպատակաուղղված է կարգապահական վարույթի իրականացմանը՝ օրինականության, հավասարության, մրցակցության, համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:

Այս համատեքստում, կարգապահական վարույթի շրջանակներում առանձնակի նշանակություն է ձեռք բերում փաստաբանի վարքագծում համապատասխան խախտումների հատկանիշների առկայության ապացուցման հանգամանքը, ինչի անտեսումը կամ չապահովումը թույլ է տալիս եզրակացնել փաստաբանի վարքագծում առերևույթ խախտման հատկանիշների բացակայության մասին, քանի որ դրանք չեն հաստատվել վարույթի ընթացքում: Ըստ այդմ՝ յուրաքանչյուր կողմ պարտավոր է ապացուցել իր կողմից վկայակոչված հանգամանքները, կրում է դրանք ապացուցված չլինելու բացասական հետևանքները, իսկ փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են վերջինիս օգտին:

Վերոնշյալի հաշվառմամբ, Հանձնաժողովը գտնում է, որ կարգապահական պատասխանատվության հիմք չի կարող լինել միայն ենթադրյալ իրավախախտման մասին դիմողի պնդումը, որը հիմնավորված չէ այնպիսի հանգամանքների վկայակոչմամբ և (կամ) ապացույցներով, որոնք հաստատապես կվկայեն փաստաբանի կողմից Օրենքի կամ Կանոնագրքի պահանջների խախտման կատարման մասին:

Տվյալ դեպքում, փաստաբան Էլադա Ղահրամանյանին վերագրում է բարեխիղճ իրավական օգնություն ցույց չտալու վարքագիծ:

Վերոգրյալի համատեքստում, Հանձնաժողովը անհրաժեշտ է համարում անդրադառնալ, մասնավորապես, հետևյալ հարցերին.

- ***արդյո՞ք Փաստաբանը բարեխիղճ իրավական օգնություն է ցուցաբերել Դիմողին,***
- ***արդյո՞ք Փաստաբանը ձեռնարկել է ողջամիտ ջանքեր Դիմողի հանձնարարությունն արագ և արդյունավետ կատարելու համար:***

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է՝ ազնվորեն և բարեխղճորեն պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով, պահպանել Օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Կանոնագրքի 2.7.1-րդ ենթակետի համաձայն՝ *փաստաբանական գործունեության հասարակական-իրավական նշանակությունը փաստաբանից պահանջում է բարձր մասնագիտական պատրաստվածություն, օրենսդրության իմացություն և գործնական փորձ, փաստաբանական գործունեության մարտավարության մեթոդների և միջոցների, ինչպես նաև հռետորական արվեստի տիրապետում:*

Կանոնագրքի 3.5.5-րդ ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալիս իր մասնագիտական*

պարտականությունները կատարել ողջամտորեն, բարեխղճորեն, որակավորված, սկզբունքայնորեն և ժամանակին, ինչը ներառում է՝

ա. նյութերի ուսումնասիրությունը,

բ. վերաբերելի իրավական ակտերի ուսումնասիրությունը,

գ. վստահորդին վերջինիս հանձնարարության կատարման կապակցությամբ հնարավոր իրավական հետևանքների առաջացման մասին իրազեկումը,

դ. վստահորդի հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարումը:

Նշված կանոններով փաստաբանի համար սահմանվում են որոշակի պարտականություններ, այն է՝ ելնել վստահորդի նպաստավոր շահերից և բարեխղճորեն և ժամանակին պաշտպանել վստահորդի իրավունքներն ու օրինական շահերը: Ընդ որում, խոսքը վերաբերում է այնպիսի գործողությունների կատարմանը, որոնք փաստացի կարող են արդյունավետ լինել վստահորդի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության պատշաճ ներկայացման համար:

Փաստաբանի մասնագիտական բարձր որակավորումը և իր պարտականությունների բարեխիղճ կատարումը փաստաբանության ինստիտուտի հանրային ընկալման առանցքային տարրերից են, որոնց բացակայությունն արժեզրկում է փաստաբանի՝ որպես իրավապաշտպան և արդարադատության կայացմանը նպաստող գործառույթներ իրականացնող անձի հասարակական նշանակությունը:

Իրենց գործառույթներն իրականացնելիս փաստաբաններն ունեն ոչ միայն իրավունքներ, այլ նաև առանձնահատուկ պարտականություններ և պարտավորություններ իրենց վստահորդների և դատարանների առջև:

ՄԱԿ-ի 1990թ. **«Փաստաբանների դերին վերաբերող հիմնարար սկզբունքներ»**-ի մասին փաստաթղթի համաձայն, փաստաբանների պարտականությունների մեջ է մտնում, inter alia, **«իրենց վստահորդներին բոլոր պատշաճ միջոցներով օգնելը, և նրանց շահերը պաշտպանելու ուղղությամբ իրավական գործողություններ ձեռնարկելը»** (կետ 13(բ), իսկ իրենց վստահորդների իրավունքները պաշտպանելիս ու արդարադատության իրականացմանը աջակցելիս պարտավոր են պաշտպանել ազգային և միջազգային իրավունքով պաշտպանված մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները, և պետք է մշտապես գործեն ազատորեն և ջանասիրաբար՝ օրենքի և իրավաբանի մասնագիտության ճանաչված սկզբունքների և էթիկական նորմերի համաձայն (կետ 14):

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի «Փաստաբանի մասնագիտական գործունեության ազատության մասին» 25.10.2000թ.Rec(2000)21 հանձնարարականի համաձայն, **փաստաբանները իրենց վստահորդների առջև պարտավոր են ձեռնարկել իրավական գործողություններ իրենց վստահորդի իրավունքները և շահերը պաշտպանելու, հարգելու և իրացնելու ուղղությամբ** (կետ 3(գ)):

Եվրոպայի փաստաբանների միությունների և իրավական համայնքների խորհրդի (CCBE-ի)՝ Եվրոպական փաստաբանների վարքագծի կանոնակարգի համաձայն՝ **փաստաբանը պետք է իր վստահորդին խորհրդակցի և նրա շահերը ներկայացնի**

«արագորեն, բարեխղճորեն և ջանասիրաբար», և փաստաբանը պետք է անձնական պատասխանատվություն վերցնի իր վրա վստահորդի հրահանգները կատարելու ուղղությամբ, և պետք է իր վստահորդին տեղեկացված պահի այն խնդրի զարգացումների մասին, որը նրան վստահվել է (կետ 3.1.2.):

Հանձնաժողովը չի կարող սահմանել այն անհրաժեշտ գործողությունների ծավալը, որը փաստաբանը պարտավոր է կատարել, քանի որ յուրաքանչյուր գործով կարող է այն տարբեր լինել՝ ելնելով տվյալ գործի առանձնահատկություններից և հանգամանքներից: Սակայն գոյություն ունի գործողությունների որոշակի նվազագույն չափ, որը ողջամիտ, անաչառ դիտորդի տեսանկյունից փաստաբանը պարտավոր է կատարել իր վստահորդի կենսական շահերի և հիմնական իրավունքների պաշտպանության ուղղությամբ, ինչը և կվկայի առնվազն փաստաբանի բարեխղճության առերևույթ առկայության մասին: Այս առումով, փաստաբանի մասնագիտական բարեխղճության չափանիշներ է սահմանում Կանոնագրքի 3.5.5 ենթակետը, որը նախատեսում է փաստաբանի կողմից վստահորդի հանձնարարության բարեխիղճ կատարման հետևյալ պայմանները՝

1. իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն.

2. վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն.

3. հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:

Իրավունքի համապատասխան ճյուղի իմացությունը նշանակում է բավարար իրազեկվածություն ոչ միայն իրավունքի տվյալ ճյուղի նորմերի և դրանցով կարգավորվող հասարակական հարաբերությունների վերաբերյալ, այլև դրանք համադրելու, վերլուծելու, դրանցում վստահորդի շահերից բխող բացերի իմացություն, մի քանի իրավական լուծումների մեջ վստահորդի շահերին լավագույնս համապատասխանող լուծման ընտրություն և իրավունքի տվյալ ճյուղից բխող պրակտիկայի իմացություն, այդ թվում իրավասու մարմինների կողմից իրավունքի տվյալ ճյուղի նորմերին տրվող գործնական մեկնաբանության և կիրառման առանձնահատկությունների վերաբերյալ:

Վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրության փաստաբանի պարտականությունը նշանակում է վստահորդի խնդրին առնչվող բոլոր փաստերի ուսումնասիրություն և վերլուծություն:

Հանձնարարությունների պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարման պարտականությունն արդեն վերոնշյալ երկու պարտականություններից ուղղակիորեն հետևող գործողությունների կատարումն է, ինչը ենթադրում է փաստաբանի մոտ վստահորդի խնդրի վերաբերյալ անհրաժեշտ պատկերացման ձևավորում և իրավունքի համապատասխան ճյուղի շրջանակներում դրա լուծման ուրվագծում, վստահորդի շահերի սպասարկման արդյունավետ ուղիների ու եղանակների կանխատեսում, որի հիման վրա փաստաբանը պարտավոր է ձեռնարկել համապատասխան և համարժեք իրավական և փաստացի միջոցներ, որոնք պետք է լինեն իրական և արդյունավետ, այլ ոչ թե ձևական և պատրանքային:

Հանձնաժողովը, գնահատելով կարգապահական գործում առկա ապացույցները,

կողմերի բացատրությունները, դրանց փոխադարձ համադրությամբ հաստատված փաստական հանգամանքները, ինչպես նաև Փաստաբանի վարքագծի իրավական գնահատման համար նշանակություն ունեցող բոլոր տվյալները, գալիս է այն եզրահանգման, որ սույն գործով Փաստաբանի վարքագծում առկա են Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 3.5.5 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներ:

Հանձնաժողովը հաստատված է համարում, որ փաստաբանը ստանձնել է Տիգրան Սիմոնյանի շահերի պաշտպանությունը, կնքել է փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր, իսկ պայմանագրի լուծված կամ դրա առարկան փոփոխված լինելու վերաբերյալ գործում որևէ ապացույց առկա չէ: Հետևաբար, մինչև հանձնարարության պատշաճ դադարեցումը կամ փոփոխությունը հավաստող փաստերի ներկայացումը Փաստաբանը պարտավոր էր շարունակել իրականացնել իր ստանձնած ներկայացուցչությունը պատշաճ կերպով և ձեռնարկել վստահորդի շահերի արդյունավետ պաշտպանությանն ուղղված անհրաժեշտ բոլոր գործողությունները:

Միևնույն ժամանակ, կարգապահական գործում ամրագրված փաստական տվյալներից հետևում է, որ թիվ ԵԴ2/10721/02/24 քաղաքացիական գործով փաստաբանի կողմից նախ ներկայացվել է հայցադիմում, որը վերադարձվել է դատարանի կողմից, քանի որ այն ստորագրված չի եղել, իսկ հայցադիմումում տեղ են գտել նաև հայցվորի տվյալներին վերաբերող ակնհայտ սխալներ: Թեև հետագայում հայցը կրկին ներկայացվել և ընդունվել է վարույթ, այդուհանդերձ նման նախնական թերությունները վկայում են, որ Փաստաբանի կողմից հայցադիմումը դատարան ներկայացնելուց առաջ այն չի ենթարկվել անհրաժեշտ չափով ստուգման և չի ապահովվել նվազագույն մասնագիտական աշխատանք:

Ավելի էական է այն, որ նույն գործով դատական բոլոր փաստաթղթերն ուղարկվել են այն հասցեով, որը որպես ծանուցման հասցե նշվել էր հենց Փաստաբանի կողմից, և դրանք ստացվել են համապատասխան գրասենյակում: Բացի այդ, գործում առկա նամակագրությունից հետևում է, որ Փաստաբանը առնվազն տեղեկացված է եղել 17.03.2025թ. դատական նիստի մասին: Այս պայմաններում Փաստաբանի այն պնդումը, թե ինքը դատական նիստերի ծանուցումներ չի ստացել, չի կարող համարվել բավարար և համոզիչ հիմնավորում իր անգործությունը բացառելու համար: Ընդհակառակը, նշված տվյալները վկայում են, որ Փաստաբանը չի ապահովել իր իսկ կողմից նշված կապի միջոցներով և հասցեներով ստացվող դատավարական հաղորդագրությունների պատշաճ վերահսկումը, իսկ դա ուղղակիորեն կապված է վստահորդի շահերի պաշտպանության համար անհրաժեշտ նվազագույն մասնագիտական ջանասիրության հետ:

Հանձնաժողովը հաստատված է համարում նաև, որ թիվ ԵԴ2/10721/02/24 քաղաքացիական գործով Դիմողը կամ Փաստաբանը չեն ներկայացել երկու հաջորդական՝ 17.03.2025 և 14.04.2025 դատական նիստերին, ինչի հետևանքով հայցը դատարանի 14.04.2025թ. որոշմամբ թողնվել է առանց քննության: Ընդ որում, նշված որոշումը չի բողոքարկվել և մտել է օրինական ուժի մեջ, ինչի հետևանքով վերացվել է նաև 10.01.2025թ. որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը, որով սահմանվել էր երեխայի հետ շփման ժամանակավոր կարգ: Այսպիսով, փաստաբանի ոչ պատշաճ վարքագիծը

հանգեցրել է ոչ միայն դատավարական բացասական հետևանքի՝ հայցի առանց քննության թողնման, այլ նաև արդեն իսկ ձեռք բերված ժամանակավոր դատական պաշտպանության կորստի:

Փաստաբանը փորձել է իր անգործությունը բացատրել նրանով, որ հանձնարարությունը փոխվել է, սակայն նույնիսկ իր իսկ բացատրությամբ չի հիշել, թե երբ է դա տեղի ունեցել, իսկ բնակության վայրը Դիմողի մոտ որոշելու պահանջով ըստ Փաստաբանի հայցը ներկայացվել է միայն 28.04.2025թ., այսինքն՝ այն բանից հետո, երբ նախորդ գործով հայցն արդեն թողնված էր առանց քննության: Ավելին, պայմանագրի առարկայի փոփոխությունը կամ նախկին հանձնարարության դադարեցումը հավաստող որևէ ապացույց գործում առկա չէ: Հետևաբար, հանձնարարության փոփոխության մասին վկայակոչումը չի կարող ազատել Փաստաբանին արդեն ընթացքի մեջ գտնվող դատական գործով իր մասնագիտական պարտականությունները պատշաճ իրականացնելու պարտականությունից:

Բացի այդ, 28.04.2025թ. կրկին ներկայացված հայցադիմումը՝ երեխայի հետ տեսակցության կարգ սահմանելու մասին, կրկին վերադարձվել է դատարանի 12.05.2025թ. որոշմամբ՝ ընդդատության կանոնների, հայցվորի հասցեական տվյալների և հայցադիմումին կից անհրաժեշտ պատճենները չներկայացնելու հիմքերով: Այս հանգամանքը հաստատում է այն փաստը, որ նույնիսկ առաջին դատավարական անհաջողությունից հետո Փաստաբանը չի վերացրել իր աշխատանքի մեջ եղած թերությունները և չի ապահովել նոր հայցադիմումի պատշաճ կազմումն ու ներկայացումը: Հետևաբար, Փաստաբանի վարքագիծը չի սահմանափակվել մեկ դրվագով կամ մեկ տեխնիկական վրիպակով, այլ արտահայտվել է փոխկապակցված մի շարք թերություններով, որոնք ամբողջության մեջ վկայում են վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալու պարտականության ոչ պատշաճ կատարման մասին:

Վերը նշված փաստական հանգամանքների համադրությամբ Հանձնաժողովը եզրակացնում է, որ Փաստաբանը Դիմողին իրավաբանական օգնություն ցույց տալիս իր մասնագիտական պարտականությունները չի կատարել ողջամտորեն, բարեխղճորեն, որակավորված և ժամանակին: Մասնավորապես, Փաստաբանը չի ապահովել հանձնարարությանը վերաբերող նյութերի և դատավարական ընթացքի պատշաճ վերահսկումը, չի ձեռնարկել անհրաժեշտ և արդյունավետ գործողություններ արդեն հարուցված գործի պատշաճ ընթացքն ապահովելու համար, չի կանխել իր իսկ վարքագծից բխող դատավարական ռիսկերը և, ի վերջո, թույլ է տվել այնպիսի հետևանքների առաջացում, որոնք անմիջականորեն վնասել են վստահորդի իրավունքների դատական պաշտպանությանը:

Հանձնաժողովն անընդունելի է համարում Փաստաբանի այն բացատրությունը, թե բացակայել է անհրաժեշտությունը մասնակցելու թիվ ԵԴ2/10721/02/24 քաղաքացիական գործով նշանակված դատական նիստերին, քանի որ փոխվել է հանձնարարությունը: Նախ, կարգապահական գործում բացակայում է Տիգրան Սիմոնյանի և Էլադա Ղահրամանյանի միջև կնքված փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիրը լուծված կամ դրա առարկան փոփոխված լինելու վերաբերյալ որևէ ապացույց, մինչդեռ Փաստաբանը նշել է, որ հանձնարարությունը փոփոխվել է գրավոր եղանակով, սակայն

համապատասխան փաստաթուղթ չի ներկայացրել: Բացի այդ, Փաստաբանը կարգապահական նիստի ընթացքում հայտնել է նաև, որ չի հիշում, թե երբ է փոխվել հանձնարարությունը, իր իսկ բացատրությամբ՝ բնակության վայրը Դիմողի մոտ որոշելու պահանջով հայցը ներկայացվել է միայն 28.04.2025թ., այսինքն՝ թիվ ԵԴ2/10721/02/24 քաղաքացիական գործով հայցը 14.04.2025թ. առանց քննության թողնելուց հետո: Հետևաբար, հանձնարարության փոփոխության վերաբերյալ հղումը ոչ միայն չի արդարացնում 17.03.2025թ. և 14.04.2025թ. դատական նիստերին չներկայանալը, այլ նաև վկայում է, որ Փաստաբանը տվյալ գործով դատական նիստերին չմասնակցելը դիտարկել է որպես գիտակցված վարքագիծ՝ առանց արդեն ստանձնված հանձնարարության պատշաճ դադարեցումը կամ փոփոխությունը հավաստող որևէ իրավական հիմքի կամ վստահորդի գրավոր համաձայնության: Նման պայմաններում Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանի նշված բացատրությունը ոչ միայն չի բացառում վերջինիս մեղքն, այլ ընդհակառակը, հաստատում է, որ նա չի կատարել վստահորդի հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունները:

Այսպիսով, Հանձնաժողովը գալիս է այն եզրահանգման, որ Փաստաբանի վարքագծում առկա են Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 3.5.5 և 2.7.1 ենթակետերի խախտման պահանջների խախտման հատկանիշները:

8. <u>Կարգապահական տույժի ընտրությունը.</u>

Կանոնագրքի 8.4.2-րդ ենթակետի համաձայն՝ այն դեպքում, երբ այլ պետության փաստաբանի կողմից առաջին անգամ թույլ տրված ոչ էական խախտումը հնարավոր է վերացնել և այն էական վնաս չի պատճառել վստահորդին, Պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է նկատողություն հայտարարել այլ պետության փաստաբանին:

Այս նորմի բովանդակությունից բխում է, որ նկատողությունը տվյալ կարգավորման շրջանակում հնարավոր է միայն այն դեպքերում, երբ խախտումը միաժամանակ ունի երեք հատկանիշ՝ առաջին անգամ է, ոչ էական է և վերացվող է, ինչպես նաև դրա հետևանքով վստահորդին էական վնաս չի պատճառվել:

Թեև գործում առկա տեղեկանքի համաձայն՝ Փաստաբանը նախկինում կարգապահական տույժ չի ունեցել, այդ հանգամանքն ինքնին բավարար չէ 8.4.2 ենթակետի հիմքով առավել մեղմ տույժ կիրառելու համար: Սույն գործով արձանագրված խախտումը չի կարող գնահատվել որպես ոչ էական, քանի որ այն դրսևորվել է ոչ թե մեկանգամյա, զուտ ձևական կամ անմիջապես շտկելի բացթողմամբ, այլ վստահորդի շահերի պաշտպանության ամբողջ ընթացքում կատարված մի քանի էական թերություններով՝ սկզբնական հայցադիմումի ոչ պատշաճ ներկայացմամբ, դատական ծանուցումների նկատմամբ ոչ բավարար վերահսկմամբ, երկու հաջորդական նիստերի չմասնակցելով, հայցը առանց քննության թողնելու հանգեցնելով, ինչպես նաև հետագայում կրկին թերի հայցադիմում ներկայացնելով: Այսպիսի վարքագիծը իր բնույթով չի կարող որակվել որպես ոչ էական խախտում: Ավելին, խախտման հետևանքները սույն գործով եղել են իրական և էական: Հայցը թողնվել է առանց քննության, իսկ այդ որոշումն օրինական ուժի մեջ մտնելու հետևանքով վերացվել է նաև հայցի ապահովման միջոցը, որով

սահմանվել էր երեխայի հետ շփման ժամանակավոր կարգ: Ընտանեկան վեճի համատեքստում նման հետևանքը չի կարող գնահատվել որպես աննշան, քանի որ այն անմիջականորեն անդրադարձել է վստահորդի և նրա երեխայի միջև շփման իրավունքի իրացման վրա և փաստացի հանգեցրել է արդեն իսկ ձեռք բերված դատական պաշտպանության կորստի:

Հանձնաժողովը գտնում է, որ սույն գործով խախտման հետևանքները կրել են ոչ միայն դատավարական, այլև ուղղակի գույքային (ֆինանսական) բնույթ: Մասնավորապես, հաստատված է, որ Դիմողը վճարել է փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագրով նախատեսված վարձատրությունը, մինչդեռ Փաստաբանի ոչ պատշաճ մասնագիտական վարքագծի պայմաններում այդ ծառայությունը չի մատուցվել պատշաճ ծավալով և արդյունավետությամբ: Ընդ որում, խոսքը միայն անհաջող դատավարական արդյունքի մասին չէ, այլ այն մասին, որ վճարովի ծառայության դիմաց վստահորդը զրկվել է ինչպես իր վճարած գումարի համարժեք իրավաբանական սպասարկումից, այնպես էլ արդեն ձեռք բերված ժամանակավոր դատական պաշտպանությունից՝ հայցի ապահովման միջոցից: Ուստի խախտման հետևանքով Դիմողին պատճառված վնասը պետք է գնահատել որպես և՛ ոչ գույքային, և՛ գույքային, այդ թվում՝ առնվազն 500 000 ՀՀ դրամի չափով ֆինանսական վնաս:

Ուստի Հանձնաժողովը գտնում է, որ Դիմողին պատճառել է էական վնաս և խախտումը 8.4.2 ենթակետի իմաստով չի կարող գնահատվել որպես ոչ էական խախտում:

Օրենքի 39.10 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի.*

1) նկատողություն.

*2) **խիստ նկատողություն**.*

*3) **լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել.***

4) տուգանք.

5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

Սույն գործով Հանձնաժողովը գտնում է, որ արձանագրված խախտման բնույթն ու հետևանքները բացառում են ամենամեղմ կարգապահական արձագանքի՝ նկատողության բավարար լինելը, սակայն միաժամանակ հիմք են տալիս ընտրել ոչ թե առավել խիստ, այլ միջանկյալ և նպատակային տույժ:

Նախ, խախտման հետևանքները սույն գործով եղել են իրական, բազմաշերտ և էական:

Փաստաբանի ոչ պատշաճ վարքագծի հետևանքով նախ թույլ են տրվել դատավարական թերություններ, ապա տեղի է ունեցել երկու հաջորդական դատական նիստերի չներկայացում, ինչի արդյունքում հայցը թողնվել է առանց քննության, իսկ այդ որոշման օրինական ուժի մեջ մտնելու հետևանքով վերացվել է նաև նախկինում կիրառված հայցի ապահովման միջոցը՝ երեխայի հետ շփման ժամանակավոր կարգը: Բացի այդ, Դիմողը, վճարելով փաստաբանական ծառայության արժեքը, կրել է նաև առնվազն 500 000 ՀՀ դրամի չափով գույքային կորուստ, քանի որ վճարովի ծառայությունը չի մատուցվել այն նվազագույն պատշաճ մակարդակով, որի համար այն ստանձնվել էր: Այսինքն՝ խախտումն ունեցել է և՛ դատավարական, և՛ անձնական, և՛ ֆինանսական բացասական հետևանքներ:

Երկրորդ, Հանձնաժողովը գնահատում է Փաստաբանի մեղքի աստիճանը և գալիս է այն եզրահանգման, որ տվյալ վարքագիծը չի սահմանափակվել մեկ պատահական բացթողմամբ: Խախտումը դրսևորվել է փոխկապակցված մի քանի դրվագներով՝ սկզբնական հայցադիմումի թերի ներկայացում, դատական ծանուցումների նկատմամբ ոչ բավարար վերահսկում, երկու հաջորդական նիստերի չմասնակցում, ապա կրկին թերի հայցադիմումի ներկայացում: Նման վարքագիծը վկայում է առնվազն կոպիտ անփութության մասին և ցույց է տալիս, որ Փաստաբանը չի ապահովել վստահորդի հանձնարարության կատարման նկատմամբ այն նվազագույն մասնագիտական հոգածությունը, որը պահանջվում էր գործի բնույթից և կարևորությունից ելնելով:

Երրորդ, Հանձնաժողովը հաշվի է առնում փաստաբանի անձը բնութագրող հանգամանքները, այդ թվում այն, որ վերջինս նախկինում կարգապահական տույժ չի ունեցել: Այդ հանգամանքը դիտվում է որպես մեղմացնող, սակայն այն ինքնին չի կարող չեզոքացնել կատարված խախտման ծանրությունը և դրա հետևանքները: Նախկինում տույժ չունենալը կարող է ազդել տույժի տեսակի խստության աստիճանի վրա, բայց չի կարող հանգեցնել ակնհայտորեն անբավարար արձագանքի ընտրության այն դեպքում, երբ խախտումն արդեն իսկ առաջացրել է վստահորդի իրավունքների պաշտպանության զգալի թերացում և ֆինանսական կորուստ:

Չորրորդ, Հանձնաժողովը հաշվի է առնում նաև այն, որ սույն գործով կարգապահական ներգործության նպատակը միայն պատժիչ չէ: Կարգապահական տույժը պետք է միաժամանակ արտացոլի խախտման հանրային և մասնագիտական վտանգավորությունը, վերականգնի մասնագիտական վարքագծի չափանիշների նկատմամբ հարգանքը և կանխի նման վարքագծի կրկնությունը հետագայում: Այդ տեսանկյունից միայն «նկատողությունը» բավարար չի կարող համարվել, քանի որ այն չի արտահայտի արձանագրված խախտման ծանրությունն ու դրա իրական հետևանքները: Մյուս կողմից, «խիստ նկատողությունը»՝ զուգորդված «Դեոնթոլոգիա» թեմայով պարտադիր վերապատրաստմամբ, ապահովում է անհրաժեշտ հավասարակշռություն՝ միաժամանակ արձանագրելով խախտման լրջությունը և ուղղելով Փաստաբանի հետագա մասնագիտական վարքագիծը:

Այսպիսով, գնահատելով խախտման հետևանքների էականությունը, Դիմողի կրած առնվազն 500 000 ՀՀ դրամ ֆինանսական կորուստը, Փաստաբանի մեղքի բարձր աստիճանը, խախտման ոչ մեկանգամյա բնույթը, ինչպես նաև այն հանգամանքը, որ Փաստաբանը նախկինում կարգապահական տույժ չի ունեցել, Հանձնաժողովը գտնում է, որ

համաչափ, արդարացի և նպատակային է Փաստաբանի նկատմամբ կիրառել «խիստ նկատողություն», ինչպես նաև լրացուցիչ պարտականություն՝ 6 ամսվա ընթացքում մասնակցել «Դեոնթոլոգիա» թեմայով 6 ակադեմիական ժամ տևողությամբ պարտադիր վերապատրաստման դասընթացի: Նշված տույժը մի կողմից բավարար չափով արտահայտում է կատարված խախտման լրջությունը, իսկ մյուս կողմից՝ հաշվի է առնում Փաստաբանի անձը բնութագրող մեղմացնող հանգամանքը և ծառայում է հետագա խախտումների կանխարգելման նպատակին:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7.-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 8-րդ մասի և 39.10.-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով, Հանձնաժողովը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Էլադա Էդուարդի Ղահրամանյանի (արտոնագիր՝ ԱՀ թիվ 67, հավատարմագիր՝ թիվ 47), նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ «խիստ նկատողություն», ինչպես նաև «լրացուցիչ տույժ՝ 6 ամսվա ընթացքում պարտադիր վերապատրաստման դասընթացների մասնակցություն՝ «Դեոնթոլոգիա» թեմայով 6 ակադեմիական ժամ ժամաքանակով»՝ «Փաստաբանության մասին» Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 3.5.5-րդ ենթակետի պահանջների խախտման համար:

2. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:

ՀՀ փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի
նախագահ՝ **Տաթևիկ Շալջյան**

Թիվ ԿԳ-25092-2-Ա
18 փետրվարի 2026թ.
ք.Երևան